

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հեռահաղորդակցության բնագավառում գործունեությունը ենթակա է լիցենզավորման: Գործունեության առանձին տեսակներով զբաղվելու լիցենզավորման ամենաընդհանրացված նպատակը համարվում է գործունեության կոնկրետ տեսակի կարգավորումն ու վերահսկողությունը: Գործունեության ցանկացած տեսակի և մասնավորապես հեռահաղորդակցության ոլորտում լիցենզավորման նպատակների թվում հատկանշական են և խիստ կարևորվում են առաջին հերթին սպառողների իրավունքների պաշտպանությունը և ապրանքների ու ծառայությունների որակի բարձրացումը: Գործունեության համապատասխան լիցենզիայի տրամադրման, ինչպես նաև արդեն լիցենզավորված գործունեության իրականացման ընթացքում ներկայացվող պահանջներն ու պայմաններն ապահովում են տվյալ ծառայության կամ ապրանքի առավել բարձ որակ՝ դրանով իսկ նաև պաշտպանելով սպառողների շահերը: Բացի այդ, լիցենզավորումն անուղակիորեն նպաստում է նաև զարգացող շուկայական հարաբերությունների կարգավորմանը<sup>1</sup>:

Լիցենզավորումն իրականացվում է որոշակի սկզբունքներով: Այսպես, ՀՀ օրենսդրությունն առաջնային սկզբունք է դիտարկում անձանց իրավունքների, օրինական շահերի, բարքերի և առողջության պաշտպանությունը, ինչպես նաև պետության պաշտպանության և անվտանգության ապահովումը: Շուկայական հարաբերությունների զարգացման պայմաններում ցանկալի է լիցենզավորման այնպիսի սկզբունքի առկայությունը, ինչպիսին է Հայաստանի Հանրապետության տարածքում տնտեսական գործունեության բնագավառում միասնական քաղաքականության ապահովումը և լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների մեկ միասնական ցանկի սահմանումը: Լիցենզավորման հիմքում դրված և օրենսդրությամբ ամրագրված որոշ սկզբունքներ բարենպաստ միջավայր են ձևավորում լիցենզավորվող անձանց համար. այդպիսիք են լիցենզավորման միասնական կարգի և սկզբունքների սահմանումը, լիցենզավորման գործընթացի պարզեցումը և թափանցիկության ապահովումը, լիցենզավորման հրապարակայնությունը, լիցենզավորման գործընթացի օրինականության ապահովումը, լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորման ենթակա գործունեության պահանջների խախտման համար պատասխանատվության միասնական չափանիշների և տեսակների սահմա-

<sup>1</sup> «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված:

նումը<sup>2</sup>:

Լիցենզավորման հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Լիցենզավորման մասին», «Հեռահաղորդակցության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքներով և մի շարք ենթաօրենսդրական ակտերով: Նշված օրենքները սահմանում են հեռահաղորդակցության բնագավառում գործունեության իրականացման իրավական հիմքերը, դրա մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները:

Լիցենզավորման հարաբերությունները կարգավորվում են նաև լիցենզավորող մարմինների հաստատած կարգերով: Մինչև «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի ընդունումը լիցենզավորման հետ կապված հարաբերությունները կարգավորող միակ իրավական ակտը ՀՀ նախարարների խորհրդի 1991թ. մարտի 5-ի թիվ 161 որոշումն էր, որով սահմանվում էին Հայաստանի Հանրապետության տարածքում պետական լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները:

Համաձայն այդ որոշման հեռահաղորդակցության բնագավառում լիցենզավորման էին ենթակա գործունեության հետևյալ տեսակները՝

- կապի տեխնիկական համակարգերի արտադրությունը և սպասարկումը, տեղեկատվական և համակարգչային ցանցերի, այդ ոլորտում տեխնիկական և ծրագրային համակարգերի ստեղծումը և շահագործումը,

- հեռուստահաղորդումների տեխնիկական համակարգերի արտադրությունը և սպասարկումը, այդ թվում կաբելային հեռուստատեսությունը<sup>3</sup>:

Այսօր արդեն այլ է հեռահաղորդակցության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկը: Ի տարբերություն ՀՀ նախարարների խորհրդի սահմանած ցանկի, այժմ արդեն առավելապես լիցենզավորվում է ծառայությունների մատուցման գործունեությունը, այլ ոչ թե որոշակի համակարգերի արտադրությունը: Միակ բացառությունը 9 կիլոհերցից բարձր և 400 տիրույթի ռադիոլեկտրոնային միջոցների արտադրության, ինչպես նաև առևտրի կամ ներմուծման լիցենզավորումն է: Հեռահաղորդակցության բնագավառում լիցենզավորման են ենթակա նաև գործունեության հետևյալ տեսակները.

- հեռախոսային ծառայությունների մատուցում,
- հեռագրային կապի ծառայությունների մատուցում,
- տվյալների փոխանցման ծառայությունների մատուցում,

<sup>2</sup> Նույն տեղում, 4-րդ հոդված:

<sup>3</sup> «ՀՀ տարածքում տնտեսական գործունեության տեսակներով զբաղվելու կարգի մասին» ՀՀ նախ. խորհրդի 05.03.1991թ. թիվ 161 որոշման ցանկ 2:

- հեռարձակման տեխնիկական ապահովման ծառայությունների մատուցում,
- հեռուստառադիոհաղորդումների հեռարձակում<sup>4</sup>:

Եւենք, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը սկզբնապես նախատեսում էր լիցենզիայի երեք տեսակ՝

- հեռուստառադիոհաղորդումների արտադրության,
- հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման,
- հեռուստառադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման:

Այնուհետև, 21.11.2001թ. օրենքում կատարված փոփոխությամբ, որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ, հեռուստառադիոհաղորդումների արտադրությունը, հեռուստառադիո-հաղորդումների արտադրությունը և հեռարձակումը համվեցին՝ այս ոլորտում որպես լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ սահմանելով միայն հեռուստառադիոհաղորդումների հեռարձակումը:

ՀՀ նախարարների խորհրդի արդեն հիշատակված թիվ 161 որոշման համաձայն հեռահաղորդակցության բնագավառում լիցենզավորող մարմիններն են ՀՀ կապի նախարարությունը և ՀՀ հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեն:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը մշակում և իրականացնում է կապի և տեղեկատվայնացման, ինչպես նաև տրանսպորտի բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը: ՀՀ տրանսպորտի և կապի նախարարին ՀՀ վարչապետի առաջարկությամբ նշանակում է հանրապետության Նախագահը: Նախարարության կանոնադրությունը հաստատում է ՀՀ կառավարությունը:

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը կարգավորող անկախ պետական մարմին է՝ բաղկացած ինն անդամից, որոնց նշանակում է ՀՀ Նախագահը: 2001 թվականի մարտի 19-ի ՀՀ Նախագահի հրամանագրով ձևավորվել է հանձնաժողովի առաջին կազմը:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը նախատեսում է լիցենզավորման երկու ընթացակարգ՝ պարզ և բարդ: Հեռահաղորդակցության բնագավառի վերոհիշյալ գործունեության տեսակների լիցենզավորումն իրականացվում է բարդ ընթացակարգով: Բարդ ընթացակարգով տրվող լիցենզիան լիցենզավորող մարմնի կողմից լիցենզավորման կարգերին համապատասխան տրվող գործունեություն իրականացնելու թույլտվություն է, որով սահմանվում են նաև տվյալ գործունեության իրականացման համար պարտադիր պահանջներ կամ պայմաններ, և դրանց պահպանման նկատմամբ իրականացվում է օրենքով սահմանված կարգով հսկողություն: Պարզ ընթացակարգով լիցենզիան, ի

<sup>4</sup> նույն տեղում 43-րդ հոդված:

տարբերություն բարդի, տրվում է ոչ թե լիցենզավորման կարգերի, այլ միայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն: Պարզ լիցենզիան տրվում է առանց լիցենզավորող մարմնի որոշման հայտատուի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց երեք օր հետո, մինչդեռ բարդ լիցենզիան տրվում է միայն լիցենզավորող մարմնի որոշմամբ՝ հայտատուի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 30 օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ<sup>5</sup>:

Հեռահաղորդակցության բնագավառում գործունեության բոլոր տեսակների լիցենզիաները տրվում են բարդ ընթացակարգով, ընդ որում միայն հեռուստառադիոհաղորդումների եթերային հեռարձակման և հեռախոսային ծառայությունների մատուցման լիցենզավորումներն իրականացվում են մրցութային կարգով:

Հեռուստառադիոհաղորդումների եթերային հեռարձակման լիցենզիան տրվում է յոթ տարի ժամկետով, իսկ կաբելային հեռարձակման լիցենզիան տաս տարի ժամկետով: Լիցենզիայի գործողության ժամկետը չի երկարաձգվում<sup>6</sup>: Հեռահաղորդակցության բնագավառում գործունեության մյուս տեսակների լիցենզիաները տրվում են անժամկետ:

Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզիա կարող են ստանալ միայն իրավաբանական անձինք, իսկ գործունեության մնացած տեսակների լիցենզիաներ կարող են ստանալ ինչպես իրավաբանական անձինք, այնպես էլ անհատ ձեռնարկատերերը: Լիցենզիա ստանալու համար «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը նախատեսում է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ հայտ (դիմում), իրավաբանական անձի համար կանոնադրության պատճեն և պետական գրանցման վկայականի պատճեն, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ պետական գրանցման վկայականի պատճեն, անձի մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ որակավորում պահանջող գործունեության տեսակով զբաղվելու համար հայտ ներկայացվելու դեպքում, օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված այլ փաստաթղթեր: Հեռահաղորդակցության բնագավառում գործունեության ոչ մի տեսակի համար չի պահանջվում անձի մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթուղթ: Բացի նշված փաստաթղթերից, լիցենզավորման կարգերով և մյուս օրենքներով պահանջվում են նաև այլ փաստաթղթեր, տարբեր պահանջներ են նախատեսվում նաև դիմումում նշվող տեղեկությունների վերաբերյալ: Հեռուստառադիոհաղորդումների կաբելային հեռարձակման լիցենզիա ստանալու համար դիմողը թվարկված փաստաթղթերի հետ

<sup>5</sup> «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 25և 26 հոդվածներ:

<sup>6</sup> «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդված, «ՀՈԱՀ կանոնակարգ» ՀՀ օրենքի 49-րդ հոդված:

պետք է ներկայացնի նաև տեղական ինքնակառավարման մարմնի համաձայնությունը՝ կաբելային ցանց ստեղծելու ժամանակ տեխնիկական պայմանների իրականացման վերաբերյալ: Հեռուստառադիոհաղորդումների եթերային հեռարձակման լիցենզիա ստանալու համար պահանջվում է ներկայացնել մրցութային առաջարկ:

«Հեռահաղորդակցության մասին» ՀՀ օրենքը և ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հաստատած լիցենզավորման կարգերը նախատեսում են նաև գործունեության իրականացման նախագծի ներկայացում, որը պետք է ներառի տեղեկություններ տեխնիկական միջոցների ցանկի և դրանց բնութագրող նյութերի, ձեռքբերման աղբյուրների և ֆինանսատնտեսական հնարավորությունների, աշխատող անձնակազմի որակավորման մասին և հարկ վճարողի հաշվառման համարի պատճենը, իսկ հեռարձակման տեխնիկական ապահովման ծառայությունների մատուցման ու 9 կլիոհերցից բարձր և 400 տիրույթի ռադիոէլեկտրոնային միջոցների արտադրության, առևտրի կամ ներմուծման լիցենզիա տալու համար պահանջվում է նաև ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն: Դիմումին կից ներկայացվող փաստաթղթերից է նաև պետական տուրքի մուծման անդորրագիրը: Պետական տուրքի չափը սահմանվում է օրենքով: Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզիա տալու համար գանձվում է նաև լիցենզային վճար, որի չափը սահմանում է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը՝ հաշվի առնելով սիմման տարածքը և հաղորդչի հզորությունը, սակայն այն չի կարող գերազանցել սահմանված նվազագույն (հաշվարկային) աշխատավարձի հինգհարյուրապատիկը:

Լիցենզավորող մարմինները դիմումները քննարկում և լիցենզիա տալու կամ լիցենզիա տալը մերժելու մասին որոշումները կայացնում են պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո 60 օրվա ընթացքում: «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը նախատեսում է լիցենզիա տալը մերժելու փոքրաթիվ հիմքեր: Մասնավորապես, լիցենզիայի տրամադրումը կարող է մերժվել, եթե դիմողի կողմից ներկայացված փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված, կամ չեն համապատասխանում օրենսդրության պահանջներին: Մերժման հիմք է նաև դիմողի կողմից օրենքի համաձայն հայցվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունք չունենալը, ինչպես նաև օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված այլ դեպքերը:

Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզիա տալու մերժման հիմք է նաև հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման տեխնիկական հնարավորությունների բացակայությունը: «Հեռահաղորդակցության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է գործունեության մյուս տեսակների համար մերժման նաև այլ հիմքեր. դիմողի կողմից առաջարկվող հեռահաղոր-

դակցության գործունեության անհամապատասխանությունը ՀՀ-ում գործող ստանդարտներին և նորմերին, գործող լիցենզիաների պայմաններին հակասելը:

Լիցենզիաների ծները հաստատում են լիցենզավորող մարմինները: Լիցենզավորված անձինք իրենց անվանման, գտնվելու վայրի փոփոխության կամ վերակազմակերպման դեպքում այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից 15 օրվա ընթացքում պետք է դիմեն լիցենզավորող մարմնին լիցենզիան վերածակերպելու համար: Հեռախոսային ծառայությունների մատուցման և հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզիաները տրվում են գործունեության իրականացման կոնկրետ վայրի նշումով, և լիցենզավորված անձինք պարտավոր են գործունեություն իրականացնել միայն լիցենզիայում նշված վայրում:

Հեռուստառադիոհաղորդումների կաբելային հեռարձակման լիցենզիա տալու ընթացակարգը սահմանված է «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով: Լիցենզիա ստանալու համար ներկայացվող դիմումում պետք է նշվեն հեռուստառադիոընկերության տեսակը, դիմողի անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսը, ֆաքսը, էլ.փոստը, հեռուստառադիոհաղորդումների տարածման տեսակը, հաղորդումների թեմատիկան և մասնագիտացումը, հեռուստառադիոհաղորդումների պարբերականությունը, հեռուստառադիոհաղորդումների առավելագույն ժամալը, հեռուստառադիոհաղորդումների լեզուն, հեռուստառադիոդասընթացներ կազմակերպելու լեզուն (եթե այդպիսիք նախատեսվում են), հաղորդումների սիմվոլային տարածքը և բնակչության թիվը, տեղեկություններ դիմողի, այլ հեռուստառադիոընկերության հիմնադիր և լիցենզավորված անձ կամ զանգվածային լրատվության այլ միջոցների հիմնադիր լինելու, ինչպես նաև դրանց արտադրությանը և տարածմանը զբաղվելու մասին, տվյալներ տեխնիկական միջոցների և սարքավորումների մասին (տեխնիկական բնութագրերը և հավաստագրերը կցվում են), հեռուստառադիոընկերության հաղորդումների եթեր հեռարձակելու ժամանակի մասին, տեղեկություններ աշխատակազմի թվաքանակի, նրանց կրթության և մասնագիտական պատրաստվածության մասին, տեղեկություններ ֆինանսական աղբյուրների մասին, վերահեռարձակվելիք ծրագրերը:

Ի տարբերություն գործող օրենսդրության, նախկին օրենսդրությունը ֆիզիկական անձանց ևս հնարավորություն էր տալիս ստեղծել կաբելային հեռուստատեսություն: Կաբելային հեռուստատեսության լիցենզիա ստացած անձը պետք է դիմեր նաև ՀՀ կապի նախարարություն՝ կաբելային հեռուստատեսության տեղեկատվական համակարգերի ստեղծման համար տեխնիկական թույլտվություն ստանալու համար: Տեխնիկական թույլտվությունը տրվում էր ՀՀ կաբելային հեռուստատեսության զարգացման գլխավոր սխեմային համապա-

տասխան երևան քաղաքում և հանրապետական մշակութային քաղաքներում 2000 բաժանորդ ունենալու դեպքում և առանց սահմանափակման՝ 33 մյուս քաղաքներում ու բնակավայրերում: Բացի այդ, ներկայիս օրենսդրությունը արբանյակային հեռարձակումը չի նախատեսում որպես լիցենզիայի առանձին տեսակ: Լիցենզավորված հեռուստառադիոընկերությունները կարող են արբանյակային հեռարձակում իրականացնել՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Չեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին:

Իսկ 33 նախարարների խորհրդի 10.10.1991թ. թիվ 600 որոշման համաձայն երկրի արհեստական արբանյակների և սահմանամերձ հեռուստակայանների կողմից տրվող հաղորդումների ընդունումն ու տարածումն իրականացվում էր միայն 33 հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի կողմից տրված լիցենզիայի հիման վրա:

Ինչ վերաբերում է հեռուստառադիոհաղորդումների եթերային հեռարձակման լիցենզավորմանը, յուրաքանչյուր հաճախությամբ հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթ հայտարարելիս Չեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը սահմանում է մրցույթի պայմաններ: Մրցույթի պայմանները սահմանելիս հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ սփռման տարածքում հեռուստառադիոհաղորդումների միջոցով լսարանի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, գիտալուսավորչական, կրթական, մարզական, ժամանցի և հանրության համար կարևոր այլ տեղեկատվությամբ ապահովվածությունը, իսկ օտարերկրյա հեռուստառադիոհաղորդումների ամբողջական վերահեռարձակման լիցենզիա տալու համար՝ նաև դրանց արտադրության անհնարինությունը, հեռուստատեսության և ռադիոյի քննազավառում տնտեսվարման առանձնահատկությունները: Ազատ հաճախության առկայության դեպքում կամ հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց երկու ամիս առաջ հանձնաժողովը հայտարարում է մրցույթ: Մրցույթը հայտարարվում է զանգվածային լրատվության միջոցով՝ հրապարակելով մրցույթի մասին անհրաժեշտ տեղեկատվությունը, որը ներառում է խիստ որոշակի տվյալներ, մասնավորապես լիցենզավորման ենթակա գործունեության, լիցենզիայով հատկացվող հաճախության նոմինալի ու բնութագրի, հաղորդումների սփռման տարածքի, մրցույթի պայմանների, անցկացման ժամկետի ու վայրի, դիմումի ձևի և ներկայացվելիք անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի, ինչպես նաև դրանց ու մրցութային առաջարկի ընդունման ժամկետի և վայրի, լիցենզային վճարի չափի և մուծման ձևի վերաբերյալ:

Սինչև «Չեռուստատեսության և ռադիոյի մասին» 33 օրենքի ընդունումը ռադիոհաճախությունների մրցութային հատկացումն իրականացնում և հեռարձակման լիցենզիան տալիս էր 33 փոստի և հեռահաղորդակցության նախարարության կողմից ստեղծված մրցութային հանձնաժողովը: Մրցույթի և

լիցենզիա տալու կարգը սահմանված էր ՀՀ կառավարության «Ռադիոյի և հեռուստատեսային ծրագրերի եթերային հեռարձակումը կազմակերպելու համար նախատեսված ռադիոհաճախությունները մրցույթով հատկացնելու և հեռարձակման լիցենզիա տալու կարգի մասին» 19.03.1999թ. թիվ 171 որոշմամբ: Համաձայն այդ որոշման մրցույթին կարող էին մասնակցել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա իրավաբանական անձինք: Մրցութային հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվում էին ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի, սեփականաշնորհման, մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությունների, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության և գրադատարակչության վարչության ներկայացուցիչները, մրցույթն սկսելուց առնվազն մեկ ամիս առաջ (ի տարբերություն գործող օրենքով սահմանված երկամսյա ժամկետի) մատուցում և զանգվածային լրատվության մյուս միջոցներով նույնպես հրապարակում էր մրցույթի և դրա անցկացման մասին տեղեկատվություն: Տեղեկատվությունը բովանդակում էր գրեթե նույն տվյալները, ինչ որ պահանջվում է այսօր գործող օրենսդրությամբ:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեին այն իրավաբանական անձինք, որոնք ժամանակին ներկայացրել էին հայտը, մրցույթի նախավճար կատարելու մասին փաստաթուղթը, մասնակցի հիմնադիր փաստաթղթի պատճենը, հատկացվող ռադիոհաճախության օգտագործման վերաբերյալ մրցույթի մասնակցի գրավոր առաջարկությունները՝ փակ ծրարով, ՀՀ պետական հեռուստառադիոծրագրերի հեռարձակման ցանցի զարգացման համար մրցույթի մասնակցի միանվագ վճարման պարտավորության երաշխիքը, որը պետք է գերազանցեր մրցույթի նախավճարը:

Հեռախոսային ծառայությունների մատուցման գործունեության լիցենզիայի տրամադրումը, որը նույնպես իրականացվում է մրցութային կարգով, կատարվում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից ստեղծվող մրցութային հանձնաժողովի միջոցով, որի կազմում ընդգրկվում են նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ծառայության ներկայացուցիչները: Մրցույթի անցկացման մասին զանգվածային լրատվության միջոցով այս դեպքում ևս հրապարակվող տեղեկատվությունը պարունակում է հեռուստառադիոհաղորդումների եթերային հեռարձակման լիցենզիայի և ընդհանրապես ցանկացած մրցույթի համար տրվող հայտարարությանը հատուկ տվյալներ՝ հաշվի առնելով լիցենզավորման ենթակա գործունեության կոնկրետ տեսակի առանձնահատկությունները:

Հեռուստառադիոհաղորդումների եթերային հեռարձակման, ինչպես նաև հեռախոսային ծառայությունների մատուցման լիցենզիաների դիմումը

(հայտը), անհրաժեշտ փաստաթղթերը, իսկ հեռուստառադիոհաղորդումների եթերային հեռարձակման դեպքում՝ նաև մրցութային առաջարկը հանձնաժողով են ներկայացվում մրցույթի մասին տեղեկատվությունը հրապարակելու օրվանից սկսած 25 օրվա ընթացքում: Մրցութային առաջարկը պետք է ներկայացվի երկու օրինակից՝ կարված և կնքված, որոնք հանձնաժողովի քարտուղարությունում ծրարվում են և կնքվում դիմողի ու հանձնաժողովի կնիքներով: Քարտուղարության աշխատակիցն իրավունք չունի ծանոթանալ մրցութային առաջարկի բովանդակությանը:

Մրցութային առաջարկները բացվում են հանձնաժողովի նիստում: Մրցութային առաջարկները լսելուց հետո հանձնաժողովը կատարում է լավագույն կազմակերպության ընտրություն: Ընտրությունը կատարվում է՝ հաշվի առնելով մրցույթի մասնակցի սեփական արտադրության և հայրենական արտադրության հաղորդումների գերակայությունը, մասնակցի տեխնիկական և ֆինանսական հնարավորությունները, աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությունը:

Հավասար պայմանների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է այն մասնակցին, որն իր գործունեության ընթացքում հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենսդրության խախտումների թույլ չի տվել, հեռուստառադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման բնագավառում ունի առնվազն երեք տարվա փորձ: Ամբողջական վերահեռարձակման համար հայտի առկայության դեպքում կարող է նախապատվությունը տրվել նրան, եթե տվյալ ընդգրկույթի հաճախությունների 1/5-ը ազատ է: ՀՀ կառավարության վերոհիշյալ 19.03.1999թ. թիվ 171 որոշմամբ մրցույթի հաղթող էր ճանաչվում այն մասնակիցը, որը ներկայացրել էր լավագույն գործարար ծրագիրը և առաջարկում էր լավագույն պայմանները, իսկ հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում էր ՀՀ ռեգիոնալ հանդիսացող իրավաբանական անձանց: Մրցույթի հաղթողին ուղարկվում էր մրցույթի արդյունքների մասին արձանագրության պատճենը, որից հետո մեկ ամսվա ընթացքում տրվում էր հեռարձակման լիցենզիան: Ընկերությունը պարտավոր էր լիցենզիան ստանալուց հետո 6 ամսվա ընթացքում կնքել ռադիոհաճախության տիրույթի շահագործման պայմանագիր: Մրցույթի հաղթողը պարտավոր էր իրեն հաղթող ճանաչելու մասին մրցութային հանձնաժողովի ամփոփ արձանագրության պատճենն ստանալու օրվանից տաս օրվա ընթացքում փոխանցել գործարար ծրագրում նշված գումարը:

Գործող օրենսդրությամբ լավագույն կազմակերպություն ընտրված մասնակցին հանձնաժողովը որոշում է ճանաչել հաղթող և տալ հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզիա: Որոշում ընդունելու հաջորդ օրը հանձնաժողովը և մրցույթի հաղթողը ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրություն:

Հեռուստառադիոհաղորդումների եթերային և կաբելային հեռարձակման լիցենզիա տալու մասին որոշման պատճենը հանձնաժողովը տասնօրյա ժամկետում ուղարկում է դիմողին: Որոշման պատճենն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում դիմողը պետք է կատարի անհրաժեշտ մուծումները: Մուծումները հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում տրվում է լիցենզիան: «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո մինչև օրենքի ընդունումը լիցենզավորված և գործող հեռուստառադիոընկերությունները վերալիցենզավորվեցին Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովում նախկինում լիցենզավորված ժամկետներով և անվճար:

Հեռախոսային ծառայությունների մատուցման լիցենզիայի մրցույթի դեպքում ոչ թե քննարկվում է մրցութային առաջարկ, այլ գործունեության նախագիծ, որի հիման վրա մրցութային հանձնաժողովը քվեարկությամբ որոշում է մրցույթի հաղթողին: Մրցույթի հաղթողին 2 օրվա ընթացքում ուղարկվում է մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը: Ի տարբերություն վերը շարադրված մրցութային կարգով լիցենզավորման ընթացակարգի, որտեղ մրցույթի հաղթող ճանաչելու հետ միաժամանակ որոշվում էր նաև տալ լիցենզիա, այս դեպքում մրցույթի հաղթողը լիցենզիա ստանալու համար նորից պետք է հայտ ներկայացնի: Հայտում պետք է նշի իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը (եթե հայտատուն իրավաբանական անձ է), գտնվելու և գործունեության իրականացման վայրը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել: Պահանջվող փաստաթղթերի հետ ներկայացվում է նաև մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը:

Հայաստանի Հանրապետությունում հեռագրային կապի ծառայությունների մատուցման ու տվյալների փոխանցման ծառայությունների մատուցման գործունեությունների և հեռարձակման տեխնիկական ապահովման ծառայությունների մատուցման ու 9 կիլոհերցից բարձր և 400 տիրույթի ռադիոէլեկտրոնային միջոցների արտադրության, առևտրի կամ ներմուծման գործունեության տեսակների լիցենզավորումների ընթացակարգերը նույնն են. ներկայացվում է հայտ նույն բովանդակությամբ, ինչ որ պահանջվում էր հեռախոսային ծառայությունների մատուցման լիցենզիա ստանալու հայտի համար և անհրաժեշտ փաստաթղթերը: Սահմանված ժամկետներում քննարկվում է հայտը և կայացվում համապատասխան որոշում:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գործունեության որոշ տեսակների լիցենզիա ստանալու համար պահանջվում է փորձաքննություն: Փորձաքննությունը գործողությունների ընթացակարգ է՝ վերլուծում, ճիշտ եզրակացության հանգում և զնահատում, որի միջոցով որոշվում է լիցենզավորման համար ներկայացված փաստաթղթերի համապատասխան-

նությունը ՀՀ օրենսդրությանը, հեռահաղորդակցության բնագավառում գործող նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերին և ստանդարտներին:

Հեռահաղորդակցության բնագավառում փորձաքննության անցկացման կարգը սահմանվում է ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 9-ի «Հեռահաղորդակցության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված փորձաքննությունների իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 173-Ն որոշմամբ: Իրականացվում են փորձաքննության հետևյալ տեսակները՝

- հեռարձակման տեխնիկական ապահովման ծառայությունների գործունեության լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերի փորձաքննություն,

- 9 կիլոհերցից բարձր և 400 տիրույթի ռադիոլեկտրոնային միջոցների արտադրության, առևտրի կամ ներմուծման գործունեության լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերի փորձաքննություն,

- ՀՀ հեռահաղորդակցության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված փորձաքննության իրականացման լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերի փորձաքննություն:

Փորձաքննությունն իրականացնում են համապատասխան լիցենզիա ունեցող անձինք: Փորձաքննության եզրակացությունը ներկայացվում է լիցենզիա ստանալու հայտի հետ միասին: Փորձաքննության իրականացման ժամկետը չի կարող գերազանցել 30 օրը, առավել խոշոր և բարդ փորձաքննությունների համար նշված ժամկետը կարող է երկարացվել, բայց ոչ ավելի, քան 15 օրով: Փորձաքննության արդյունքների հիման վրա կազմվում է փորձագիտական եզրակացություն: Փորձաքննության բացասական արդյունքների դեպքում փաստաթղթերը վերադարձվում են պատվիրատուին լրամշակման: Լրամշակումից հետո իրականացվում է փաստաթղթերի կրկնակի փորձաքննություն: Կրկնակի փորձաքննության բացասական արդյունքների դեպքում կազմվում է բացասական փորձագիտական եզրակացություն՝ համապատասխան հիմնավորումներով: Բացասական փորձագիտական եզրակացության տալը սահմանափակված է որոշակի հիմքերով: Նման եզրակացություն կարող է տրվել, եթե պատվիրատուն չի ապահովում փորձաքննությանը ենթակա փաստաթղթերի լրակազմությունը, կամ ներկայացված փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններով: Փորձաքննության օրյեկտի անհամապատասխանությունը ՀՀ օրենսդրության, հեռահաղորդակցության բնագավառի նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի և ստանդարտների պահանջներին ու պայմաններին, ինչպես նաև բնապահպանական, հիգիենիկ և սանիտարահամաճարակային անվտանգության, հակահրդեհային

նորմերին և կանոններին նույնպես հիմք է բացասական փորձագիտական եզրակացության համար:

Փորձաքննություն իրականացնելու լիցենզիան ևս տալիս է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը՝ ՀՀ կառավարության «Հեռահաղորդակցության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված փորձաքննությունների իրականացման լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» 26.12.2002թ. թիվ 2180-Ն որոշման հիման վրա: Փորձաքննություն չեն կարող իրականացնել լիցենզավորող մարմնի ենթակայությամբ գործող հիմնարկները, ինչպես նաև այն կազմակերպությունները, որոնց բաժնետոմսերի 50 տոկոսից ավելին տնօրինում է լիցենզավորող մարմինը՝ բացառությամբ օրենքով ուղղակի նախատեսված դեպքերի:

Լիցենզավորող մարմինները օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում կարող են կասեցնել կամ դադարեցնել լիցենզիայի գործողությունը: Լիցենզավորող մարմինների որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով: